

Օ Ր Ա Յ Ո Յ Յ

1861

Թ Ո Ւ Ա Կ Ա Ն Ի Ն Ք Ր Ի Ս Տ Ո Ս Ի

Խալիպեան Ուսումնարանին տպարանէն ելաւ ահա երկրորդ տարուան օրացոյցն ալ, յորում թէպէտ եւ կապակասին տակաւին քանի մը կատարելութիւններ որ յոյս ունիմք յաջորդ 1862-ին օրացոյցին մէջ աւելցընելու, բայց ասոր մէջ ալ բաւական նորութիւններ կան, այսինքն պատկեր՝ հանդերձ ոտանաւորով, ամէն մէկ ամսոյն ետեւէն *նոր նոր Հանգուկներ*, կիրակի օրերուն *հարցերն ու հաւթարձի-*

ներ, ետքն ալ զանազան *գիտելիքներ ու տեղեկութիւններ*՝ այս տարուան օրացոյցին ետեւը դրուածներէն աւելի եւ ընդարձակ:

Կցաւիմք որ Տաճկաստանի ազգային տեղեկութիւններն որ խնդրեր էինք՝ այս օրացոյցին չհասան. եւ հարկադրեցանք զո՞ր լինել զրեթէ 1860 տարուոյս մէջի տեղեկութիւնները միայն կրկնելով, եւ մէկ քանի նոր տեղեկութիւն միայն աւելցընելով:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ ՄԸ

Թէոդոսիոյ ազգային Ուսումնարանիս ընթերցարանը շնորհակալութեամբ ընդունեցաւ նոյեմբերի 28-ին՝ *Ճոսփաղ* ամսագրոյն երկրորդ հատորին մէկ օրինակը, զոր կընծայէ ընթերցասէր ազգայնոց ուսումնասէր պատանին Յովհաննէս Թադէոսեան Քէօլլէ - Շահինեանց, նոր նախնիքեանցի:

Ծ Ա Ն Ո Ւ Յ Ո Ւ Մ Ն

Կենցաղօգուտ գիտելեաց Լսարանին Դասերը զատ զատ տետրակներով սկսան հրատարակուիլ, ամէն մէկ տետրակին կամ դասին զին որոշուելով 10 քովեք արծաթ: Առաջին տետրակը արդէն սկսած է վաճառուիլ: